

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԳ**

**Որոշում**

23/11/2004 թիվ 302Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ԶԱՐՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ  
ԲԱՆԿՈՍԱՏՆԵՐԻՑ ԿԱՆԽԻԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՆՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմատ գանձման մեքենաներից (բանկոմատներից) վճարային քարտերի միջոցով կանխիկացման գործառնություններ կարող են իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**

**Տ. Սարգսյան**

2004 թ. նոյեմբերի 30  
Երևան